

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ
ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա
ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ
ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա-ԻՆ (Անթիլիաս),

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Երուսաղեմ),

ԹՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Ստամբուլ),

ԲԱՐԵԽՆԱՄ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ
ԵՎ ԳԵՐԱՊԱՏԻՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ:

Այսօր երբ համայն աշխարհին վերստին կավետվի բարի լուրը Քրիստոսի Հարության, ամենայն հայոց անմար հավատքի վեմ սուրբ Էջմիածնին Մենք հուսացյալ սրտով կաղոթենք որ լույս Հարության շնորհները բաշխվին համայն մեր ժողովուրդին որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, հառավել հառագայթում հայոց քրիստոնեական հավատքի և հառավել շինություն

ու պայծառություն մեր եկեղեցական ու ազգային կյանքին:

Մեր սրտագին մաղթանքն է նաև որ նույն շնորհներով լուսավորված ու զորացած, ձեր պատմական Աթոռը և ուխտանվեր ձեր միաբանությունը շարունակեն իրենց հոգեշեն առաքելությունը մեր Մայր եկեղեցվո միության և մեր հավատավոր ժողովուրդի միասնության ոգիով, ի մխիթարություն մեզ յոլորիս և համայն հայության:

Ձեզի, սիրեցյալ Եղբայրդ, սիրո ողջույն և ամեն բարի մաղթանք, երկնային ողորմությամբ ու օգնականությամբ:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

ՎԱԶԳԵՆ Ա.
ՆԱԽԵՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական վարչությանց և խորհուրդներին, Հայկական բարեգործական ընդհանուր միության Կենտրոնական վարչությանը (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության Կենտրոնական խնամակալությանը (Լիսաբոն), Աբգարյան Ավանդի և ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), ս. Էջմիածնի հանձնախմբին (Բեյրութ), Վարդանանց ասպետներին (Ուտերտաուն), Կալիֆոռնիայի հայկական ընկերության վարչությանը (Կալիֆոռնիա), գաղութային վարչություններին, հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի և հոգևոր ճեմարանի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:

*
* *

Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով շնորհավորական գրություններ ստացվեցին Մեծի Տանն Կիլիկիո Անթիլիասի Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսից, Երուսաղեմի հայոց տ. Եղիշե սրբազան պատրիարքից, Թուրքիո հայոց տ. Շնորհք սրբազան պատրիարքից:

Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ այլ շնորհավորական հեռագրեր և նամակներ արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից: